ԳԱՅԱՆԵ ՇԱԲՈՒՆՑ

ԴՐՎԱԳՆԵՐ ՏԱՐՍԱՅԻՃ ՕՐԲԵԼՅԱՆԻ ԴՈՒՍՏՐ ԱՍՓԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ*

Սույն հոդվածում սկզբնաղբյուրների հենքի վրա ներկայացվում է Խաչենի իշխանուհի, ծագումով սյունեցի Ասփայի բարենորոգչական գործունեությունն Արցախում:

Սյունիք-Արցախ առնչությունները չեն սահմանափակվել միայն քաղաքական, ռազմական և եկեղեցական շփումներով, այլ հետաքրքիր դրվագներ կան նաև ծագումով սյունեցիների՝ Արցախում իրականացրած գործունեության և հակառակի մասին: Այդ առումով հատկանշական է նաև Արցախում հարս գնացած սյունեցի իշխանազուն կանանցից Ասփայի գործունեությունը, որի մասին վկայություններ կան վիմագիր արձանագրություններում և ձեռագիր մատյաններում:

Սյունյաց նշանավոր իշխան Տարսայիճ Օրբելյանն ուներ չորս որդի և երկու դուստր: Առաջին կնոջից՝ Արուզ Խաթունից ծնված երեխաներն էին Ելիկումը, Ստեփանոսը (Սյունյաց տան նշանավոր պատմիչը), Փախրադուլան, իսկ երկրորդ կնոջից՝ Մինա Խաթունից, ով նշանավոր Ջալալ Դուլայի դուստրն էր, ծնված երեխաներն էին Ջալալը, Ասփան և Մամքանը[1]:

Տարսայիճ Օրբելյանի և Մինա խաթունի դուստր Ասփան ամուսնացած էր Խաչենի իշխան, Դոփյան տոհմից Գրիգոր Բ-ի հետ: Սյունեցի այս իշխանուհին, հարս գնալով Արցախ, այնտեղ ձեռնարկեց շինարարական և նվիրատվական գործունեություն: Իր գործունեությունը հավերժացնող բոլոր արձանագրու-

---

* Հոդվածը ներկայացվել է 22.11.2019 թ., գրախոսվել՝ 15.12.2019 թ., տպագրության ընդունվել՝ 20.12.2019 թ. :

[1] Տե՛ս **Յովսեփեան Գ.**, Տարսայիճ Օրբէլեանի եւ Մինա Խաթունի սերունդը, «Հասկ», հայագիտական տարեգիրք, Ա տարի, Անթիլիաս-Լիբանան, 1948, էջ 6:

թյուններում Ասփան նշում էր, որ դուստրն է «արքայաշուք Տարսայիճի» և «թագազարմ Մինա խաթունի»:

Խթրավանքը կամ Խաթրավանքը եղել է Դոփյան տոհմի գերեզմանատունը: Վանքի անունը արձանագրություններում և աղբյուրներում հիշատակվում է նաև Խադարի կամ Խադայի վանք: Այս անունը, հավանաբար, ծագել է Թադեոս առաքյալի Խադ կամ Խաթ աշակերտի անունից, որին նվիրված էր վանքը: Խաթրավանքը գտնվում է Վաղուհաս գյուղից արևմուտք մոտ 8 կմ հեռու, ձորերով շրջապատված մի դժվարամատչելի լեռնահարթակի վրա, որի ստորոտով հոսում է Թարթառ գետը[1]:

Իշխանուհի Ասփան կառուցել է բեմի սեղանը, ինչի մասին թողել է հետևյալ արձանագրությունը.

«Շնորհիւ Քրիստոսի ես Ասփէ դուստր արքայաշուք իշխանին Տարսայիճին, թագազարմ մաւրն իմոյ Մինախաթունին, նպաստ եղեալ քրիստոսապսակ գլխոյ իմոյ մեծափառ իշխանին Գրիգորի սուրբ եկեղեցւոյս, կամեցայ ի ձեռն քահանայապետին մեծի տեսան Յովհաննիսի՝ զիմ յարդար ընչից կանգնեցի Բեմի սեղան ի զենմանն Քրիստոսի, զի ամենայն կիրակէ եւ շաբաթ տաւն ծննդեան եւ տեառնընդառաջին, զատկի, զվարդավառին, աստուածածնին եւ սուրբ խաչի ինձ կատարի պատարագ զամէն եկեղեցիքս, որ եւ տուի զմեր Խաս հողն Բլրի հանդի զսենեկպան. ա. բահի ջուր, թէ ոք ի մերոյ կամ զպատարագն խափանէ, ի փառաց որդւոյն Աստուծոյ, որոշեալ եղիցի»[2]:

Մակար եպս. Բարխուտարյանցից բացի՝ սույն արձանագրությունը հրատարակել են նաև Սարգիս արքեպս. Ջալալյանցը[3] և Հովհ. եպս. Շահխաթունյանցը[4]: Տեղին նշենք, որ

---

[1] Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. 5, Արցախ,կազմ.՝ **Բարխուդարյան Ս.**, Երևան, 1982, էջ 121:

[2] **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, Բագու, 1895, էջ 194-195: Հմմտ. Դիվան հայ վիմագրության, պր. 5, էջ 129:

[3] Տե՛ս **Ջալալեանց Ս.**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփղիս, 1858, էջ 206:

[4] Տե՛ս **Շահխաթունեանց Ց.**, Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. Բ, Էջմիածին, 1842, էջ 362:

երեք հեղինակներն էլ արտագրել են իրարից, իսկ բուն աղբյուրը՝ Եսայի կաթողիկոսի ձեռագիրն է[1]:

Խաթրավանք

Պաստմաբան Շահեն Մկրտչյանը նշում է, որ միջնադարյան Հայաստանում մի գեղեցիկ սովորություն է եղել. վանական շենքեր կառուցելիս նրա պատերի մեջ դրել են հին խաչքարեր և արձանագրություններ, պատմական հիշատակների հետ կապված հին առարկաներ և իրեր: Եվ, այսպիսով, կառուցված շենքը դարձել է յուրահատուկ թանգարան: Դրա լավագույն օրինակ է Խաթրավանքը, որի պատերի մեջ երևացող տասնյակ խաչքարերով ու վիմագրություններով կարելի է բացել գավառի նախընթաց պատմության և մշակույթի շատ ծալքեր, որոնց մասին ուրիշ աղբյուրներ գոյություն չունեն[2]:

Վանքը բաղկացած է երեք եկեղեցիներից, գավթից, բնակելի ու կոմունալ շինություններից: Խաթրավանքի կաթողիկեի շինարարական արձանագրությունը 1204 թվականից է և հայտնում է, որ եկեղեցին կառուցել է Հովհաննես Խաչենեցին: Եկեղեցին ներքուստ խաչաձև, արտաքինից ուղղանկյուն, չորս

[1] Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. 5, էջ 129:
[2] Տե՛ս **Մկրտչյան Շ.**, Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1980, էջ 44:

անկյուններում ավանդատներով հորինվածք ունի: Հատակագծում անհամաչափ է: Աղոթասրահի մեջ ներառված են ուղղանկյուն բեմ ունեցող միանավ թաղածածկ երկու մատուռները: Այդ առումով այն բացառիկ է հայ ճարտարապետության մեջ: Եկեղեցու ներսի սյուները սրբատաշ գորշ քարից են, զարդարված քանդակներով: Չորս սյուներից առաջին երկուսը ամբողջական, իսկ մյուսները երկուական կտոր քարից են բաղկացած: Նրանց խարիսխներին քանդակված են ավետարանիչների խորհրդանիշներ: Բեմն ավագ սեղանով տեղավորված է արևելյան պատի կիսաշրջանի մեջ: Կան նաև երկու մեծ և երկու փոքր խորաններ: Ներսի պատերը ծեփված են կրաշաղախով: Եկեղեցուն կից է փլված զանգակատունը: Նրա կիսավեր պատերից երևում է, որ զանգակատունը եղել է կրկնահարկ՝ տորոնագույն քարով երեսպատված: Զանգակատան արևմտյան մասում է գտնվում թաղածածկ դահլիճի տիպի սեղանատունը: Արևելքից արևմուտք ձգվող այս շինությունն իր դիրքով բավականին կարևոր դեր է խաղում համալիրի ճարտարապետության ընդհանուր լուծման մեջ: Սեղանատունը համենատաբար լավ է պահպանված: Պատերը և թաղը կառուցված են տեղական կոպտատաշ քարերով ու կրաշաղախով, միայն թաղակիր կամարները և որմնասյուներն են շարված սրբատաշ քարով[1]:

Խաթրավանքի արձանագրություններից մեկն էլ հիշատակում է Ասփայի կողմից կամուրջի կառուցման մասին: Արձանագրությունն ունի հետևյալ բովանդակությունը.

«Կամաւն Աստուծոյ ես Ասփայ դուստր մեծ իշխանին Տարսայիճին և Մինախաթունին և ամուսին Հսկազաւր իշխանին Գրիգորի որդւոյ մեծ իշխանին Հասանայ քաջի Տեառն Աղուանից կանգնեցի զխաչս. շինեցի զկարմունջս. յիշատակ հոգւոյ մերոց անցնելոց ներկայից և ապագայից» [2]:

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 45:

[2] **Զալալեանց Ս.**, նշվ. աշխ., էջ 206:

Ասփայի կողմից բեմի սեղանի և կամուրջի կառուցումը վկայող վիմագիր արձանագրությունները չեն պահպանվել, և Դիվան հայ վիմագրության 5-րդ հատորում դրանք զետեղված են Եսայի կաթողիկոսի ձեռագրի արտագրությունից, և նշվում է, որ վանքի և Վաղուհաս գյուղի արանքում՝ Թարթառ գետի վրա մնում են այդ կամուրջի խելերը, իսկ ձախ ափին՝ ժայռերի վրա՝ կրաշաղախի տեղերը, որտեղ էլ կանգնեցված է եղել խաչքարը[1]:

Սակայն, ինչպես նշում է նշանավոր հայագետ Գարեգին Հովսեփյանը, Ասփայի բարեգործության ամենամեծ հուշարձանն իր արդար վաստակով գնած և ծաղկած «Թարգմանչաց» հայտնի Ավետարանն է: Ձեռագիրն այդ անունը ստացել է Գանձակի մոտ գտնվող Թարգմանչաց վանքում պահվելու պատճառով[2]: Երկսյուն գրությամբ Ավետարանն ունի 30,1Х23,2 սմ մեծության մագաղաթյա սպիտակ, լավ մշակված 372 թերթ[3]: Ըստ Գ. Հովսեփյանի՝ Ավետարանը գրված է 1202 թվականին երկաթագրով՝ Տիրացու գրչի ձեռքով: Ծաղկողը Գրիգոր երեցն էր, առաջին ստացողը Հովհաննես ավագերեցն էր, իսկ Ասփան՝ երկրորդ ստացողը[4]: Ավետարանի հիշատակարանը տեղեկություններ է հաղորդում Ասփայի, Գրիգոր իշխանի, Դոփեանց մյուս իշխանների մասին, իսկ հիշատակարանի վերջում ասվում է. «Զմեծ եւ զամենաւրհնեալ պարոնաց պարոն զԳրիգոր որդի Դոփին եւ զամենագովելի զբարեպաշտ ամուսին իւր զպարոն Ասփայն, զստացողք եւ զարդարիչք սուրբ աւետարանիս յիշեցէք ի Քրիստոս»[5]: Մատթեոսի վերջի հիշատակարանն էլ նշում է, որ Ասփան զարդարել է «…զանազան սպասիւք եւ շինուածիւք զեկեղեցիս Հայաստանեայց, ստացաւ եւ սուրբ

[1] Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պրակ 5, էջ 130:

[2] Տե՛ս **Յովսեփեան Գ.**, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիա-Լիբանան, 1969, էջ 435:

[3] Տե՛ս **Չուգասզյան Լ.**, Գրիգոր Ծաղկողի արվեստի ուսումնասիրման պատմությունը, ԼՀԳ, Երևան, 1985, N 8, էջ 103:

[4] Տե՛ս **Յովսեփեան Գ.,** նշվ. աշխ., էջ 436:

[5] Նույն տեղում, էջ 436:

աւետարանս յարդար ընչից իւրոյ եւ ընծայեաց ի սուրբ ուխտն Խաղարիէ, որ Դոփեանց գերեզմանատունն էր»[1]:

«Թարգմանչաց» Ավետարանը պահվում է Մաշտոցյան Մատենադարանի Հմր 2743-ի տակ: Ավետարանի ուսումնասիրությունը սկսվել է 19-րդ դարում: Ձեռագիրը սկզբում գրավել է ազգագրագետների ուշադրությունը: 1842 թվականին Սարգիս արքեպս. Ջալալյանցը հրատարակել է մատյանի հիշատակարանների մի մասը: 1895 թվականին Մակար եպս. Բարխուտարյանցը լույս է ընծայել հիշատակարանները՝ ավելի ամբողջական տեսքով, իսկ մատյանի նկարազարդումներն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել Գ. Հովսեփյանը[2]: «Թարգմանչաց» Ավետարանը Խաթրավանքից տեղափոխվելուց հետո մինչև 1900 թվականը պահվել է Թարգմանչաց վանքում: 1900 թվականին Գ. Հովսեփյանը ձեռագիրը վանքից տեղափոխել է Էջմիածնի Մատենադարան: Ավետարանի մանրամասն ուսումնասիրությամբ, ծաղկողի, գրչության ձևերի վերլուծությամբ հետագայում զբաղվել է աղբյուրագետ-ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանը[3]:

Հավելենք, որ իշխանուհի Ասփան մահացել է 1311 թվականին և թաղվել Խաթրավանքում. «…Յայսմ ամի, որ էր թիւն ՉԿ (1311) փոխեցաւ յաշխարհէս Ասփայ»[4]: Կնոջ հիշատակի համար Գրիգորը կատարել է մեծամեծ նվիրատվություններ, զարդարել է տալիս Ավետարան, Խաթրավանքին է նվիրել այգիներ, գյուղեր և այլն:

Այսպիսով, իշխանուհի Ասփան, ժառանգելով մոր՝ Մինա Խաթունի շինարարությամբ ու նվիրատվությամբ զբաղվելու աստվածահաճո մեծ շնորհը, հարս գնալով Արցախ, շարունակեց Օրբելյանների և Դոփյանների հայրենանվեր գործունեությունը:

---

[1] Նույն տեղում:

[2] Տե՛ս **Չուգասզյան Լ.**, նշվ. աշխ., էջ 59:

[3] Տե՛ս **Մաթևոսյան Ա.**, Թարգմանչաց Ավետարանը, ամսագիր հայրապետական աթոռոյ Ս. Էջմիածնի, Էջմիածին, սեպտեմբեր-հոկտեմբեր-նոյեմբեր, 1992, էջ 102-105:

[4] **Ուլուբաբյան Բ.**, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975, էջ318:

ԴՐՎԱԳՆԵՐ ՏԱՐՍԱՅԻՃ ՕՐԲԵԼՅԱՆԻ ԴՈՒՍՏՐ ԱՍՓԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

ԱՄՓՈՓՈՒՄ

ԳԱՅԱՆԵ ՇԱԲՈՒՆՑ

Տարսայիճ Օրբելյանի և Մինա Խաթունի դուստր Ասփան, ամուսնանալով Խաչենի իշխան Դոփյան տոհմից Գրիգորի հետ, Արցախում զբաղվել է շինարարական և նվիրատվական գործունեությամբ: Ասփան Խաթրավանքում հովանավորել է բեմի սեղանի կառուցումը, ինչպես նաև հիշատակություն կա կամուրջի կառուցման մասին: Ասփայի բարեգործություններից էր նշանավոր «Թարգմանչաց» Ավետարանը, որի երկրորդ ստացողն էր նա:

Բանալի բառեր - Ասփա, Խաթրավանք, «Թարգմանչաց» Ավետարան, Սյունիք, Արցախ, նվիրատվություն, շինարարություն:

ЭПИЗОДЫ ИЗ ДЕЯТЕЛЬНОСТИ ДОЧЕРИ ТАРСАИЧА ОРБЕЛЯНА АСПЫ

РЕЗЮМЕ

ГАЯНЕ ШАБУНЦ

Дочь Тарсаича Орбеляна и Мины Хатун Аспа вышла замуж за Григора из рода князя Допяна в Хачене. В Арцахе она занималась строительством и благотворительной деятельностью. Аспа выступила спонсором строительства алтарного стола в монастыре Хтра и также есть упоминание о строительстве моста. Результатом благотворительной деятельности Аспы является известное Евангелие «Переводчика», вторым получателем которого была сама Аспа.

Ключевые слова: Аспа, Хатраванк, Евангелие «Переводчиков», Сюник, Арцах, дарение, строительство.

EPISODES FROM THE ACTIVITIES OF TARSAYICH ORBELYAN'S DAUGHTER ASPA

SUMMARY

GAYANE SHABUNC

Tarsayich Orbelyan and Mina Khatun's daughter Aspa married Grigor deriving from Prince Dopyan's tribe in Khachen. In Artsakh she was engaged in construction and donation activities. Aspa sponsored the construction of a stage table in Khtra Monastery, and there are some minutes about the construction of the bridge as well. One of Aspa's charities was the notable Translator's Gospel, the second recipient of which was Aspa.

Key words: Aspa, Khtra Monastery, Translators' Gospel, Syunik, Artsakh, donation, construction.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Բարխուտարեանց Մ**., Արցախ, Բագու, 1895, 461 էջ:
2. **Զալալեանց Ս**., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփղիս, 1858, 458 էջ:
3. Դիվան հայ վիմագրության, պրակ 5, Արցախ, կազմեց՝ **Ս. Բարխուդարյան**, Երևան, 1982, 274 էջ:
4. **Մաթևոսյան Ա**., Թարգմանչաց ավետարանը, ամսագիր հայրապետական աթոռոյ Ս. Էջմիածնի, Էջմիածին, սեպտեմբեր-հոկտեմբեր-նոյեմբեր, 1992, էջ 102-115:
5. **Մկրտչյան Շ**., Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1980, 216 էջ:
6. **Յովսեփեան Գ**., Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիա-Լիբանան, 1969, 425 էջ:
7. **Յովսեփեան Գ**., Տարսայիճ Օրբէլեանի եւ Մինա Խաթունի սերունդը, «Հասկ», հայագիտական տարեգիրք, Ա տարի, Անթիլիաս-Լիբանան, 1948, էջ 1-25:
8. **Շահխաթունեանց Յ**., Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի-հինգ գաւառացն Արարատայ, հ. Բ, Էջմիածին. 1842, 561 էջ:
9. **Չուգասզյան Լ**., Գրիգոր Ծաղկողի արվեստի ուսումնասիրման պատմությունը, ԼՀԳ, Երևան, 1985, N 8, էջ 59-65:
10. **Ուլուբաբյան Բ**., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975, 453 էջ: